# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/232/2 - 24

**<<25>> դեկտեմբերի 2024թ** — **ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս**

***Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***

***Նախագծող՝ «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ***

***Տնօրեն՝ Կ.ՎԱՍԻԼՅԱՆ***

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Գեղարքունիքի մարզ, Բերդկունքի ամրոցի վերականգնման և ամրակայման նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

Նախահաշվային արժեքը կազմում է՝ **303 262.64** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

**Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:**

**Տնօրեն՝** **Ն. Սիրեկանյան**

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

տնօրեն Ն. Միրեկյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Բերդկունքի ամրոցի վերականգնման և ամրակայման նախագծանախահաշվային փաստաթղթեր

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Կ.ՎԱՍԻԼՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզ, Բերդկունքի ամրոցի վերականգնման և ամրակայման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ գոյություն ունեցող կորագիծ ուրվագծով աշտարակների բազալտե կոպտատաշ քարերի զգուշությամբ կազմաքանդում և վերաշարում, կարերի և անցքերի փոշեզրկում և լվացում ջրի շիթով: Բազալտե կորագիծ ուրվագծով աշտարակների նոր տաշ ու շար մեխանիկական գործիքներով, բարդ շաղախով և ճեղքված բազալտով լիցքի իրականացում, բազալտե պատուհանների հարթ երեսապատի անկյունային քարերի նոր տաշ ու շարի իրականացում ձեռքի մեխանիկական գործիքներով՝ ֆակտուրային մշակմամբ: Մակերեսների փոշեզրկում ջրաշիթով և մաքրում հավելանյութով աշխատանքների սկզբին և ավարտին: Պատերի շարում կոպտատաշ բազալտից, սալահատակի իրականացում ճեղքված քարով, աստիճանների իրականացում կոպտատաշ բազալտով, բազալտե եզրաքարերի տեղադրում:Գոյություն ունեցող բազալտե պատերի խորքային կարանախցում համանման կառուցման, պատերի գլխամասերի նոր տաշ ու շար կոպտատաշ բազալտի պոչով քարերով և բարդ շաղախով ջրանթափանց նյութի պլանիկրեդի օգտագործմամբ: Թրծած ապակե ծածկույթների

իրականացում: Հողային աշխատանքների կատարում, բնահողի բարձում և տեղափոխում, խճի նախապատրաստական շերտի իրականացում, ասֆալտբետոնե ծածկույթի փռում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է **303 262.64** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2333.65** և մեքենաների շահագործման ինդեքսը **3037.35**

Նյութերի արժեքն ընդունված է 2024թ. N **12** «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Տնօրեն Ն. Սիրեկանյան*

*Փորձագետ Տ. Վիրաբյան*